ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» նոյեմբերի 2014 թվականի N 153 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 120-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 30-ի «Գյումրու համայնքային սեփականություն համարվող Երևանյան խճուղի N 30ա հասցեի նախակրթարանի շենքի երկու մասնաշենքերը «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության օգտագործումից հետ վերցնելու և դրանք անհատույց օգտագործման իրավունքով ամերիկյան «Փարոս» հիմնադրամի «Դեպի առաջ» հասարակական կազմակերպությանը տրամադրելու մասին» N 120-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) վերնագրում «երկու մասնաշենքերը» բառերը փոխարինել «մեկ մասնաշենքը» բառերով և «դրանք» բառը փոխարինել «այն» բառով,
   2) որոշման 1-ին կետի 3-րդ տողի «երկու մասնաշենքերը» բառերը փոխարինել «մեկ մասնաշենքը» բառերով և 4-րդ տողի «մասնաշենքը» բառը փոխարինել «երկու մասնաշենքերը» բառերով,
   3) որոշման 2-րդ կետի 1-ին տողի «երկու մասնաշենքերը» բառերը փոխարինել «մեկ մասնաշենքը» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան _____		
Գ. Ադամյան _____		
Ա. Բաղեյան _____		
Ա. Բաղրամյան _____		
Լ.Բարսեղյան _____		
Մ. Գաբոյան _____		
Ա.Գրիգորյան _____		
Վ.Եդիգարյան _____		

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«14» նոյեմբերի 2014 թ.